ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԴԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԻ ՑԱՆԿԸ՝

ԱՅՍ ԲՈԼՈՐ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ (SLAPP)

1. **<u>Հայցվոր՝ «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ</u>**
<u>հանքարդյունաբերական ընկերություն)</u>

Պատասխանող՝ ԼԵՎՈՆ ԳԱԼՍՏՅԱՆ (ակտիվիստ) և **Սիվիլիթաս հիմնադրամ** (լրագրողական կազմակերպություն) ներգրավված որպես երրորդ անձ

Գործի համար՝ ԵԴ/16785/02/18

Սկսման ամսաթիվ՝ 10-08-2018

Պահանջ՝ հերքել Civilnet-ում իր հարցազրույցում, Հայկական Բնապահպանական Ճակատի ի Ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև նրա անձնական էջում հրապարակված զրպարտչական տվյալները, ինչպես նաև վճարել 1 միլիոն դրամ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Մանրամասներ. Գալստյանը նշել էր, որ Հայաստանի կառավարությունն ընդունել է օրենքներին հակասող որոշումներ, որոնք հնարավոր են դարձրել Լիդիանի նախագծերի հաստատումը, և դա անվանել էր անուղղակի կոռուպցիա: Նա նաև նշել էր, որ Լիդիանը մեծ գումարներ է փոխանցում Ամուլսարի նախագծի վերաբերյալ որոշումների կայացման վրա ազդեցություն ունեցող պաշտոնյաների կողմից կառավարվող հիմնադրամներին, և դա նույնպես անվանել էր անուղղակի կոռուպցիա:

Արդյունքներ՝ 6 /վեց/ տարվա դատավարության ընթացքում հայցվորը մոտ 5 անգամ փոխել է իր պահանջների ձևակերպումը

Առաջին ատյանի դատարանը 10.05.2024 թ.-ին մերժել է ներկայացված հայցն ամբողջությամբ, որի դեմ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի կողմից բերված վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը մերժել է վարույթ ընդունել, իսկ այնուհետև դրա դեմ բերված բերված վճռաբեկ բողոքի ընդունումը ևս մերժվել է և առաջին ատյանի դատարանի վճիռը 19.12.2024 թվականին մտել է օրինական ուժի մեջ:

2. **<u>Հայցվոր՝ «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ</u>**
<u>(հանքարդյունաբերական ընկերություն)</u>

<u>Պատասխանող՝</u> ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ (ակտիվիստ)

Գործի համար՝ ԿԴ3/1445/02/18

Սկսման ամսաթիվ՝ 16-11-2018

Պահանջ՝ հերքել նրա անձնական Ֆեյսբուքյան էջում հրապարակված զրպարտչական տվյալները, ինչպես նաև վճարել 1 միլիոն դրամ որպես փոխհատուցում: Ընկերությունը նաև պահանջել է դատարանից մինչև գործի ավարտը պարտավորեցնել ակտիվիստին չկատարել ընկերության վերաբերյալ որևէ հրապարակում:

Մանրամասներ . Խաչատրյանը իր Ֆեյսբուքյան գրառման մեջ նշել էր, որ Լիդիանի՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության եզրակացության մեջ առկա են եղել թերի տվյալներ, որ թույլտվությունները ստացվել են կոռուպցիոն միջոցներով, լրատվամիջոցները և փորձագետները վարձատրվել են ընկերությանը աջակցելու համար, կեղծ էջեր և էջեր են հավաքագրվել հանքի դեմ հանդես եկող ակտիվիստներին զրպարտելու և վիրավորելու համար, և կարշում է, որ Լիդիանն է կազմակերպել Ամուլսարի տարածքում հրդեհը: Սկզբում Խաչատրյանին

չէին տեղեկացրել դատական վարույթի մասին և իմացել էր միայն այն ժամանակ, երբ ԴԱՀԿ ծառայությունը նրան տեղեկացրել էր դատարանի որոշման կատարման մասին (ըստ ընկերության պահանջի)՝ իր ակտիվների (վրա կալանք դնելու և նրան Ֆեյսբուքում Ամուլսարի մասին որևէ բան հրապարակելու արգելք հանդիսացող որոշումը կիրառելու մասին: Խաչատրյանը բողոքարկել էր այս միջանկյալ միջոցը:
Արդյունքներ՝ 07.04.2021 թվականի վճռով առաջին ատյանի դատարանը մասնակի բավարարել է ներկայացված հայցը և վճռել Անի Խաչատրյանին պարտավորեցնել հերքելու տարաշաշ տեղեկատվությունը և Անի Ռազմիկի Խաչատրյանից հօգուտ «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության բռնագանձել 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ, որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.02.2022 թվականի որոշմամբ վճիռը՝ հայցի բավարարմանը վերաբերող մասով, բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան՝ բեկանված մասով նոր քննության:
Դատարանը 09.09.2024 թվականի վճռով հայցն ամբողջությամբ մերժվել է:
Նշված վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել «հայցվոր ընկերությունը:
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.05.2025 թվագրմամբ 12.05.2025 թ.ին հրապարակված որոշմամբ բողոքը բավարարվել է և վերաքննիչ դատարանը որոշել է բեկանել ու փոփոխել վճիռը, այն է՝ Անի Խաչատրյանին պարտավորեցնել հրապարակայնորեն հերքել 2018 թվականի հոկտեմբերի 21-ին, ժամը 11:37-ին «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության վերաբերյալ ֆեյսբուքյան իր էջում հրապարակված զրպարտություն համարվող փաստացի տվյալները, այն է՝ «ներկայացրել է թերի փորձաքննություններով ՇՄԱԳ, կոռուպցիայով ստացել է թույլտվություններ, առել է լրատվամիջոցներ ու մասնագետների կարծիքներ, ֆեյքերի միջոցով փորձում է վարկաբեկել ու վիրավորում է հանուն Ամուլսարի պայքարողներին, Ամուլսարի տարածքի հրդեհի կազմակերպիչն էլ եք դուք», հերքումը հրապարակելով Անի Խաչատրյանի ֆեյսբուքյան էջում: Անի Խաչատրյանից հօգուտ «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:Հայցը մնացած մասով մերժել:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի հիշյալ որոշման դեմ Անի Խաչատրյանի կողմից բերվել է վերաքննիչ բողոք, որի վցերաբերյալ դեռևս որոշում առկա չէ:

Դատական գործընթացը տևում է ավելի քան 7 /յոթ/ տարի:

3. **Հայցվոր՝ «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**
(հանքարդյունաբերական ընկերություն)

Պատասխանող՝ ՆԱՉԵԼԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ (փաստաբան)
Գործի համար. ԵԴ/30203/02/18
Մեկնարկի ամսաթիվ ՝ 21-12-2018թ.
Պահանջ՝ հերքել զրպարտչական տվյալները, ինչպես նաև վճարել 1 /մեկ/ միլիոն դրամ որպես փոխհատուցում:
Մանրամասներ ՝ 2018 թվականի նոյեմբերի 29-ին կայացած ասուլիսում Վարդանյանը նշել է, որ Լիդիանը մեծ գումարներ է փոխանցել Ջերմուկ համայնքի ղեկավարի որդու կողմից կառավարվող հիմնադրամներին, որից հետո համայնքի ղեկավարի կարծիքը Ամուլսարի նախագծի վերաբերյալ կտրուկ փոխվել է, և նա սկսել

է աջակցել հանքարդյունաբերական նախագծին: Նա հռետորական հարց է բարձրացրել, թե էլ ինչն է համարվում կոռուպցիա:
Արդյունքներ. Առաջին ատյանի դատարանը 10.06.2020 թվականին վճռել է պարտավորեցնել Ն. Վարդանյանին հերքել կատարված հայտարարությունը և վճռել նաև Նազելի Վարդանյանից հօգուտ <<Լիդիան Արմենիա>> ՓԲ ընկերության բռնագանձել 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:
Վճռի դեմ Վարդանյանի կողմից բերվել է վերաքննիչ բողոք, որի արդյունքնում վերաքննիչ դաքտարանը մասնակի բավարարել է բողոքը, հերքելու պահանջի մասով մերժել է , սակայն վճռել է հօգուտ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:
Նշված որոշման դեմ Վարդանյանի կոմղից բերված վճռաբեկ բողոքի ընդունումը մերժվել է: Վարդանյանը գանգատ է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ պնդելով, որ խախտվել են Կոնվենցիայով ամրագրված իր խոսքի ազատության և արդար դատաքննության իրավունքները:
Դատական գործընթացը ներպետական ատյաններում տևել է շուրջ 3 /երեք/ տարի:

4. **<u>Հայցվոր՝ «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ</u>**
<u>(հանքարդյունաբերական ընկերություն)</u>

Պատասխանող՝ Հայկ Գրիգորյան (ակտիվիստ)
Գործի համար՝ ԵԴ/2192/02/19
Սկսման ամսաթիվ ՝ 31.01.2019
Պահանջ՝ հերքել իր անձնական Ֆեյսբուքյան էջում հրապարակված զրպարտչական տեղեկությունները, ինչպես նաև վճարել 1 միլիոն դրամ որպես փոխհատուցում:
Մանրամասներ՝ Գրիգորյանը իր անձնական Ֆեյսբուքյան էջում գրառում էր արել՝ ասելով. «ՀԱՆՑԱՎՈՐ Լիդիանը շարունակում է գնել վաճառքի հանված պետական պաշտոնյաներին», որը հավանել է 5 մարդ և կիսվել 1 անձի կողմից:
Արդյունքներ ՝ Առաջին ատյանի դատարանը որոշել է գրիգորյանից բռնագանձել հօգուտ Լիդիանի 100,000 դրամ փոխհատուցման գումար, իսկ մնացած մասով մերժել է մյուս պահանջները:
Գրիգորյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ դատարանը բավարարել է մասնակի, այն է՝ 100,000 դրամ փոխհատուցման գումարը փոփոխել է 50.000 ՀՀ դրամի:

5. **Հայցվոր՝ «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**
(հանքարդյունաբերական ընկերություն)

Պատասխանող՝ ՍԵՐԳԵՅ ԲԱԳՐԱՏՅԱՆ (Խորհրդարանի պատգամավոր)
Գործի համար ՝ ԵԴ/5106/02/19
Սկսման ամսաթիվ՝ 22-02-2019
Պահանջ՝ հերքել զրպարտչական տվյալները, ինչպես նաև վճարել 2 միլիոն դրամ որպես փոխհատուցում:
Մանրամասներ՝ 2019 թվականի փետրվարի 17-ին Ջերմուկի կրթական

հաստատություններ պատգամավորների պաշտոնական այցի ժամանակ Բագրատյանը պատասխանել է մեկ այլ պատգամավորի՝ Ամուլսարի նախագծի վերաբերյալ հարցին: Հարցն այսպիսին էր՝ «Ո՞վ է երաշխիք տվել այսքան գումար ապարդյուն ներդնելու ռիսկերի համար», որին Բագրատյանը պատասխանել է, որ նախկին կառավարությունը գումար է վերցրել որպես կաշառք և հաստատել է նախագծի թույլտվությունները:
Արդյունքներ՝ Դատարանը որոշել է վճարել 100,000 դրամ փոխհատուցում և մերժեց մյուս պահանջները:
Վճռի դեմ դատավարության որևէ մասնակցի կողմից բողոք չի ներկայացվել և այն մտել է օրինական ուժի մեջ:

6. **Հայցվոր՝ «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** (հանքարդյունաբերական ընկերություն)

Պատասխանող՝ ԷԴՄՈՆ ԱՂԱԲԵԿՅԱՆ (Ջերմուկ քաղաքի բնակիչ)
Գործի համար ՝ ԱՎԴ2/0551/02/19.
Սկսման ամսաթիվ՝ 28-03-2019
Պահանջ՝ հերքել զրպարտչական տվյալները, ինչպես նաև վճարել 1 միլիոն դրամ որպես փոխհատուցում:
Մանրամասներ՝ 2019 թվականի փետրվարի 22-ին Աղաբեկյանը մասնակցեց մամուլի ասուլիսի, որտեղ աջակցեց պատգամավոր Սերգեյ Բագրատյանի հայտարարությանը և հայտնել է, որ , որ ինքը և բոլոր ակտիվիստները կարող են հաստատել, որ Լիդիանը թույլտվությունները ստացել է կոռուպցիայի միջոցով: Եթե ընկերությունը ցանկանում է դատի տալ որևէ մեկին այդ խոսքերի համար, կարող է նաև նրան դատի տալ:
Արդյունքներ ՝ Առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել Աղաբեկյանի դեմ ներկայացված հայցը մերժելու մասին : Լիդիանի բողոքի հիման վրա բեկանվել է վճիռը և ուղարկել նոր քննության, որի արդյունքում առաջին ատյանի դատարանը բավարարել է հայցը մասնակի և պարտավորեցրել Աղաբեկյանին հերքել կատարված արտահայտությունները:
Վճռի դեմ դատավարության որևէ մասնակցի կողմից բողոք չի ներկայացվել և այն մտել է օրինական ուժի մեջ:

7. **Հայցվոր՝ «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (հանքարդյունաբերական ընկերություն)**

Պատասխանող՝ ՇԻՐԱԿ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ (Ջերմուկ քաղաքի բնակիչ)
Գործի համար ՝ ԱՎԴ2/0560/02/19
Սկզբի ամսաթիվ ՝ 28.03.2019
Պահանջ ՝ հերքել իր Ֆեյսբուքյան մեկնաբանության մեջ տեղ գտած զրպարտչական տվյալները, ինչպես նաև վճարել 1 միլիոն դրամ որպես փոխհատուցում: Բացի այդ, հայցվորը խնդրել է, և դատարանը որոշել է Բունիաթյանի գույքի վրա արգելանք կիրառել մինչև դատավարության ավարտը:
Մանրամասներ ՝ 2019 թվականի փետրվարի 25-ին Բունիաթյանը մեկնաբանել է Լիկա Սվասյանի ֆեյսբուքյան գրառումը Maxinfo.am խմբում: Գրառումը Ամուլսարի ակտիվիստներին անվանում էր «կեղծ բնապահպանական ակտիվիստներ» և

մեղադրում նրանց վարչապետի կնոջ կողմից ղեկավարվող հիմնադրամին մեկ այլ հանքարդյունաբերական ընկերության (ՀՊՄԿ) նվիրատվությունների մասին չբարձրաձայնելու համար: Այս մեղադրանքին ի պատասխան Բունիաթյանը մեկնաբանություն էր գրել, որ ՀՊՄԿ-ն երկրի ամենամեծ հանքարդյունաբերական ընկերությունն է և մեծ շահույթ ունի, մինչդեռ Լիդիանը երբեք շահույթ չի ունեցել, ուստի Լիդիանի նվիրատվությունը կոռուպցիայի միջոց է:
Արդյունքներ . Առաջին ատյանի դատարանը որոշել պարտավորեցնել Բունիաթյանին Լիդիանին վճարել 300,000 դրամ՝ առանց իր խոսքերը հերքելու որևէ պարտավորության: Այնուհետև Բունիաթյանի բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանը բեկանել է վճիռը և հայցը մերժել է ամբողջությամբ:
Վերաքննիչ դատարանի կողմից Լիդիանի կողմից բերված վճռաբեկ բողոքը վարույթ չի ընդունվել:

8. **Հայցվոր՝ «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** (հանքարդյունաբերական ընկերություն)

Պատասխանող՝ ՍԵՐԳԵՅ ԲԱԳՐԱՏՅԱՆ (պատգամավոր)
Գործի համար ՝ ԵԴ/31151/02/19
Սկզբի ամսաթիվ ՝ 24.09.2019
Պահանջ ՝ հերքել զրպարտչական տվյալները, ինչպես նաև վճարել 1 միլիոն դրամ որպես փոխհատուցում:
Մանրամասներ ՝ 2019 թվականի սեպտեմբերի 12-ին Բագրատյանը ելույթ է ունեցել խորհրդարանում, որտեղ նշել է, որ իրենց փորձագետների հաշվարկներով՝ «Լիդիան Արմենիան» իրենց զեկույցներում ներկայացված ծախսերը չափազանցված են մինչև 10-20 անգամ, և իրենց հաշվարկներով ընկերությունը չպետք է ներդրեր ավելի քան 20 միլիոն ԱՄՆ դոլար, մինչդեռ իրենք պնդում են 400 միլիոն, և այդպիսով ընկերությունը շանտաժի է ենթարկում Հայաստանի կառավարության ներդրումները չափազանցվածներով:
Արդյունքներ . Առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրեց հայցը բավարարելու մասին, պարտավորեցնելով Բագրատյանին հերքել իր արտահայտություններն՝ առանց նյութական փոխհատուցում վճարելու որևէ պարտավորության:
Վճռի դեմ դատավարության որևէ մասնակցի կողմից բողոք չի ներկայացվել և այն մտել է օրինական ուժի մեջ:

9. **Հայցվոր՝ «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** (հանքարդյունաբերական ընկերություն)

Պատասխանող՝ ԱՏՈՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ, «Լրագիր» առցանց լրատվամիջոց
Գործի համար՝ ԵԴ/31633/02/19
Սկզբի ամսաթիվ ՝ 27.09.2019
Պահանջ ՝ չեղյալ հայտարարել Lragir.am կայքում հրապարակված զրպարտչական տեղեկությունները, ինչպես նաև վճարել 1 միլիոն դրամ որպես փոխհատուցում: Բացի այդ, հայցվորը խնդրել է արգելանք դնել Մարգարյանի գույքի վրա մինչև դատավարության ավարտը, սակայն դատարանը մերժել է այն:

Մանրամասներ . Datalex.am կայքում ենթադրյալ զրպարտության մանրամասները չեն նշվում: Սակայն այնտեղից մենք իմանում ենք, որ Մարգարյանը հակընդդեմ հայց է ներկայացրել Lydian Armenia-ի դեմ՝ ճիշտ նմանատիպ պահանջներով:
Արդյունքներ . Հակընդեմ հայց ներկայացնելուց հետո «Լիդիան Արմենիան» միջնորդել է դատարանին հայցից հրաժարվելու մասին և գործի վարույթը կարճվել է:

10. **Հայցվոր՝ «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** (հանքարդյունաբերական ընկերություն)

Պատասխանող՝ «ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ Ընկերություն /լրագրողական կազմակերպություն/
Գործի համար ՝ ԵԴ/33691/02/19
Սկզբի ամսաթիվ ՝ 11.10.2019
Պահանջ ՝ հերքել զրպարտչական տվյալները և վճարել 1 (մեկ) ՀՀ դրամ փոխհատուցում:
Մանրամասներ ՝ 2019 թվականի օգոստոսի 19-ին 1IN.AM կայքը հրապարակեց «Ո՞րն է ելքը: Արմեն Սարգսյանը կարող է փոխել իրավիճակը» վերնագրով հոդված: Հոդվածում նշվում էր, որ եթե նախորդ քաղաքական ռեժիմը ստանա լիարժեք քաղաքական և իրավական գնահատական, ապա, անկասկած, դրա արդյունքները կազդեն Լիդիանի Ամուլսարի նախագծի վրա, որը հաստատվել է կոռուպցիոն գործարքների միջոցով, ուստի ներկայիս իշխանությունները բոլոր հիմքերն ունեն նախագծի թույլտվությունները չեղարկելու համար:
Արդյունքներ ՝ Առաջին ատյանի դատարանը որոշումէ կայացրել հայցն ամբողջությամբ բավարարելու մասին, այն է՝ պարտավորեցնել հրապարակային հերքել հրապարակման մեջ նշված տեղեկատվությունը և «ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերությանը հօգուտ «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության բռնագանձել 1 /մեկ/ ՀՀ դրամ գումար՝ որպես զրպարտանքի փոխհատուցման գումար:

11. **Հայցվոր՝ «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** (հանքարդյունաբերական ընկերություն)

Պատասխանող՝ ԳԵՎՈՐԳ ՍԱՖԱՐՅԱՆ (ակտիվիստ)
Գործի համարը՝ ԵԴ2/2677/02/19
Սկզբի ամսաթիվ ՝ 10.12.2019
Պահանջ ՝ հերքել զրպարտչական տվյալները և վճարել 1 միլիոն դրամ որպես փոխհատուցում: Բացի այդ, հայցվորը խնդրել է արգելանք դնել Սաֆարյանի գույքի վրա մինչև դատավարության ավարտը, սակայն դատարանը մերժել է այն:
Մանրամասներ ՝ «Սասնա ծռեր» կուսակցության անդամ Սաֆարյանը Iraqnum.am լրատվամիջոցին տված հարցազրույցում նշել է, որ Հայաստանի կառավարությունը պետք է հետաքննի նախկին կառավարության բոլոր կոռուպցիոն դեպքերը, այդ թվում՝ «Լիդիան Արմենիայի»՝ Ամուլսարի նախագծի շուրջ կատարվածը:
Արդյունքներ ՝ Հայցվորը հետ վերցրեց իր հայցը:

12. **Հայցվոր՝ «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** (հանքարդյունաբերական ընկերություն)

Պատասխանող՝ ԳԱԳԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ (Գնդևազ գյուղի բնակիչ)
Գործի համարը՝ ԱՎԴ3/0004/02/20
Դատավարության սկսման ամսաթիվ ՝ 13.01.2020
Պահանջ ՝ հերքել զրպարտչական տվյալները և վճարել 1 միլիոն դրամ որպես փոխհատուցում: Բացի այդ, հայցվորը խնդրել է արգելանք դնել Գրիգորյանի գույքի վրա մինչև դատավարության ավարտը, դատարանը բավարարել է միջնորդությունը: Այս սահմանափակման պատճառով Գրիգորյանը չէր կարող իր մեքենայով մուտք գործել, օրինակ, հարևան Վրաստանի գյուղատնտեսական շուկաներ:
Մանրամասներ ՝ Գրիգորյանից պահանջվել է հերքել և փոխհատուցում վճարել այն խոսքերը, որոնք իրականում ասել է մեկ այլ անձ՝ past.am լրատվամիջոցին տված հարցազրույցի ժամանակ:
Արդյունքներ ՝ Հայցվորը հետ վերցրեց իր հայցը 1.5 տարուց ավելի անց:

13. **Հայցվոր՝ «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** (հանքարդյունաբերական ընկերություն)

Պատասխանող՝ ՎԱՀԱԳՆ ԱՎԱԳՅԱՆ
Գործի համար՝ ԵԴ/0654/02/20
Դատավարության սկսման ամսաթիվ ՝ 14.01.2020
Պահանջ ՝ հերքել զրպարտչական հայտարարությունները և վճարել 1 միլիոն դրամ որպես փոխհատուցում: Բացի այդ, հայցվորը խնդրել է արգելանք դնել Ավագյանի գույքի վրա և փակել նրա Facebook հաշիվը մինչև դատավարության ավարտը, սակայն դատարանը մերժել է միջնորդությունը:
Մանրամասներ . գործի մանրամասները Datalex.am կայքում հրապարակված չեն:
Արդյունքներ ՝ Հայցվորը հրաժարվել է հայցից և գործի վարույթը կարճվել է:

14. **Հայցվոր՝ «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** (հանքարդյունաբերական ընկերություն)

Պատասխանող՝ ԱՐՓԻՆԵ ԳԱԼՖԱՅԱՆ (ակտիվիստ)
Գործի համար ՝ ԵԴ/25255/02/20
Դատավարության սկսման ամսաթիվ ՝ 21.08.2020
Պահանջ ՝ հերքել զրպարտչական հայտարարությունները և վճարել 1 միլիոն դրամ որպես փոխհատուցում: Բացի այդ, հայցվորը խնդրել է արգելանք դնել Գալֆայանի գույքի վրա, սակայն դատարանը մերժել է այն:
Մանրամասներ ՝ Ֆեյսբուքյան ուղիղ հեռարձակման ժամանակ Գալֆայանը հայտնեց, որ Լիդիանի բարձրաստիճան պաշտոնյաները նկատվել են քաղաքական կուսակցությունների ղեկավարների հետ միասին, և սա ներառում է կոռուպցիոն ռիսկ:
Արդյունքներ ՝ Հայցվորը հրաժարվել է հայցից և գործի վարույթը կարճվել է:

15. **Հայցվոր՝ «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** (հանքարդյունաբերական ընկերություն)

Պատասխանող՝ Արման Բաբաջանյան (ԱԺ պատգամավոր)
Գործի համար ՝ ԵԴ/25597/02/20
Դատավարության սկսման ամսաթիվ ՝ 26.08.2020

Պահանջ ՝ հերքել զրպարտչական հայտարարությունները և վճարել 1 միլիոն դրամ որպես փոխհատուցում: Բացի այդ, հայցվորը պահանջել է արգելանք դնել Բաբաջանյանի գույքի վրա, սակայն դատարանը մերժել է այն:
Արդյունքներ ՝ Դատարանը վերադարձրել է հայցադիմումը՝ այն թերի լինելու պատճառով, որից հետո այն կրկին չի ներկայացվել:

16. **Հայցվոր՝ «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** (հանքարդյունաբերական ընկերություն)

Պատասխանող՝ Արման Բաբաջանյան (Աժ պատգամավոր)
Գործի համար ՝ ԵԴ/28112/02/20
Դատավարության սկսման ամսաթիվ՝ 22-09-2020
Պահանջ ՝ հերքել զրպարտչական հայտարարությունները և վճարել 1 միլիոն դրամ որպես փոխհատուցում: Բացի այդ, հայցվորը պահանջել է արգելանք դնել Բաբաջանյանի գույքի վրա, սակայն դատարանը մերժել է այն:
Մանրամասներ ՝ Բողոքը վերաբերում է պատգամավոր Բաբաջանյանի www.factor.am լրատվամիջոցին տված հարցազրույցին՝ 2005 թվականից ի վեր ընկերության կողմից թույլտվությունները մեծապես կոռուպցիոն և հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելու և ընկերության գործարքը հանցավոր և կոռուպցիոն շղթաներով ամբողջությամբ կազմակերպված հանդիսանալուն:
Արդյունքներ ՝ Առաջին ատյանի դդատարանը մերժել է հայցը՝ վաղեմության ժամկետը լրանալու պատճառով:
Վճռի դեմ դատավարության որևէ մասնակցի կողմից բողոք չի ներկայացվել և այն մտել է օրինական ուժի մեջ:

17. **Հայցվոր՝ «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** (հանքարդյունաբերական ընկերություն)

Պատասխանող՝ Հակոբ Սանասարյան (գիտնական), News.am՝ որպես երրորդ դեմք
Գործի համար՝ ԿԴ/5112/02/20
Դատավարության սկսման ամսաթիվ ՝ 25.09.2020
Պահանջներ ՝ հերքել զրպարտչական հայտարարությունները և վճարել 1 միլիոն դրամ որպես փոխհատուցում: Բացի այդ, հայցվորը պահանջել է արգելանք դնել Սանասարյանի գույքի վրա, սակայն դատարանը մերժել է որոշումը:
Մանրամասներ ՝ News.am լրատվամիջոցին տված հարցազրույցում Սանասարյանը նշել է, որ Լիդիանը մոլորեցնում է Հայաստանի բնակչությանը, ինչպես նաև պետական պաշտոնյաներին, և որ նրանք սկզբից ստեղծել են կեղծ տվյալներով փաստաթղթեր, որոնք շարունակում են թարմացնել:
Արդյունքներ ՝ Հայցվորը հրաժարվել է հայցից և գործի վարույթը կարճվել է:

18. **Հայցվոր՝ «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** (հանքարդյունաբերական ընկերություն)

Պատասխանող՝ Ատոմ Մարգարյան, «Lragir.am».
Գործի համար ՝ ԵԴ/6616/02/21

Դատավարության սկսման ամսաթիվ ՝ 19-02-2021
Պահանջներ ՝ դատապարտել զրպարտչական հայտարարությունները և վճարել փոխհատուցում:
Մանրամասներ ՝ Մանրամասները հասանելի չեն:
Արդյունքներ ՝ Հայցվորը հրաժարվել է հայցից և գործի վարույթը կարճվել է:

19. **Հայցվոր՝ «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** (հանքարդյունաբերական ընկերություն)

Պատասխանող՝ Թեհմինե Ենոքյան (ակտիվիստ և Գնդեվազ գյուղի բնակիչ)
Գործի համար ՝ ԱՎԴ3/0965/02/18
Դատավարության սկսման ամսաթիվը ՝
Պահանջներ ՝ հերքել զրպարտչական հայտարարությունները և վճարել 1 միլիոն դրամ փոխհատուցում:
Մանրամասներ ՝ Ջերմուկում կայացած հանրահավաքում իր ելույթի համար, որտեղ Թեհմինեն հայտարարեց, որ Լիդիանի գործողությունները հանցագործություն են, որ ընկերությունը բախումներ է հրահրում հանքի շրջակայքում ապրող համայնքի անդամների միջև: Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել այստեղ՝ https://www.panorama.am/am/news/2022/12/08/%D4%BC%D5%AB%D5%A4%D5%AB%D5%A1%D5%B6-%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6/2766607
Արդյունքներ . առաջին ատյանի դատարանը մասամբ որոշում կայացրել է Լիդիանի օգտին և պարզեց, որ Ենոքյանը կարող էր տեղյակ չլինել «հանցագործ» բառի օգտագործման իրավական հետևանքներից, քանի որ նա իրավաբան չէր, սակայն պարտավոր էր հերքել իր հայտարարությունը առանց որևէ փոխհատուցում վճարելու պարտավորեցնելու: Ե՛վ Ենոքյանը, և՛ ընկերությունը բողոքարկել են վճիռը սակայն Վերաքննիչ դատարանը բեկանել է վճիռը՝ բավարարելով միայն Լիդիանի բողոքը՝ ընկայացնելով շատ ավելի խիստ որոշում, որով Թեհմինեին պարտավորեցրել է հերքել իր հայտարարությունը և վճարել 1.3 միլիոն դրամ՝ որպես ընկերության հեղինակությանը պատճառված վնասի, ինչպես նաև դատական ծախսերի փոխհատուցում: Վճռաբեկ դատարանը մերժել է վարույթ ընդունել Ենոքյանի վերաքննիչ բողոք: Սա Հայաստանում, նմանատիպ դատավարաություններում զրպարտության համար երբևէ սահմանված ամենաբարձր փոխհատուցման գումարն էր: Հատկանշական է, որ Հայկ Գրիգորյանը (սույն ցուցակում 5-րդ համարը) հրապարակել էր նույն հայտարարությունը, սակայն դատարանւ վերջինիս պարտավորեցրել էր վճարել միայն 100,000 դրամ, որը 13 անգամ պակաս է, քան Ենոքյանը:
Ենոքյանը նշվածի հիմքով գանգատ է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ պնդելով, որ խախտվել են Կոնվենցիայով ամրագրված իր խոսքի ազատության և արդար դատաքննության իրավունքները:

<<ՁԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ>> ՓԲ ընկերության կողմից ներկայացված հայցեր

1. **Հայցվոր՝ <<ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** (հանքարդյունաբերական ընկերություն)
   Պատասխանող՝ ԹԵՀՄԻՆԵ ԵՆՈՔՅԱՆ (ակտիվիստ)
   Գործի համար ՝ ԵԴ/1629/02/23
   Դատավարության սկսման ամսաթիվ ՝ 13-02-2023
   Պահանջներ ՝ հերքել զրպարտչական հայտարարությունները և վճարել 6 միլիոն դրամ փոխհատուցում:
   Մանրամասներ ՝ Ֆեյսբուքյան ստատուսի համար, որտեղ նա կիսվել է Կապանի բնակիչների կողմից Կոմբինատի կողմից շրջակա միջավայրի աղտոտման մասին հրապարակված տեղեկատվությամբ:
   Արդյունքներ ՝ Գործը գտնվում է քննության փուլում:
   Առաջին ատյանի դատարանը հայցի մի մասով կիրառել է հայցային վաղեմություն և այդ մասով հայցը մերժել: Մնացած մասով գործի քննությունը շարունակվում է :

2. **Հայցվոր՝ <<ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (հանքարդյունաբերական ընկերություն)**
   Պատասխանող՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՃԱԿԱՏ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ
   Գործի համար ՝ ԵԴ2/24597/02/23
   Դատավարության սկսման ամսաթիվը ՝ 27-11-2023
   Պահանջներ ՝ դատապարտել զրպարտչական հայտարարությունները և վճարել փոխհատուցում:
   Մանրամասներ ՝ Ֆեյսբուքյան գրառման համար, որում քննադատվում էր «Ոսկե ծիրան» կինոփառատոնը, որտեղ այն գովազդվում էր որպես ԶՊՄԿ-ն որպես դրա հովանավոր, մինչդեռ ԶՊՄԿ-ն հսկայական աղտոտող է:
   Արդյունքներ ՝ դատարանը գործն ընդունել է վարույթ: «Հայկական բնապահպանական ճակատ» քաղաքացիական խումբը գրանցված կազմակերպություն չէ: Հստակ չէ, թե ով է պատասխանողը, քանի որ ոչ ոք չի տեղեկացվել դատական վարույթի մասին: Արդյունքում դատարանը վճռել է հայցը բավարարել և պարտավորեցնել գոյություն չունեցող կազմակերպությանը պարտավորեցնելու կատարելու հերքում:

3. **Հայցվոր՝ <<ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (**հանքարդյունաբերական ընկերություն)
   Պատասխանող՝ Օրագիր Մեդիա ՍՊԸ /լրագրողական կազմակերպություն/
   Գործի համար ՝ ԵԴ2/34340/02/23
   Դատավարության սկսման ամսաթիվը ՝ 27-11-2023
   Պահանջներ ՝ հերքել զրպարտչական տվյալները, և վճարել փոխհատուցում:
   Մանրամասներ ՝ հրախարակումը վերաբերում էր նրան, որ բազմաթիվ տեղացիներ անգործության են մատնված, «Իսկ ԶՊՄԿ-ի ներկայիս ռուսական սեփականատեր

Գեոպրոմայնինգը, ՀՀ կառավարության հետ համատեղ, մեծացնում է արտադրական ծավալները: Մի կողմից ռուսները մեծացնում են ծավալները, մյուս կողմից ռուս լրագրողները բողոքում են բնապահպանական խնդիրների համար: Երկուսն էլ աշխատում են մեր ոխերիմ թշնամու համար :
Արդյունքներ ՝ Դատարանը վճռել մէ հայցը բավարարել, պարտավորեցնել լրատվամիջոցին հերքել հրապարակման մեջ առկա տվյալները և Օրագիր Մեդիա» ՍՊ ընկերությունից հօգուտ հայցվոր «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության բռնագանձել 200.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցում:
Վճռի դեմ դատավարության որևէ մասնակցի կողմից բողոք չի ներկայացվել և այն մտել է օրինական ուժի մեջ:

4. **Հայցվոր՝ <<ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** (հանքարդյունաբերական ընկերություն)
Պատասխանող՝ Դատաբլոգ ՍՊԸ /լրագրողական կազմակերպություն/
Գործի համար ՝ ԵԴ2/1040/02/24
Հայցի ներկայացման ամսաթիվ ՝ 08-02-2024
Պահանջներ ՝ հերքել զրպարտչական տվյալները և վճարել 6 միլիոն դրամ փոխհատուցում:
Մանրամասներ ՝ Հրապարակումը վերաբերել էր էկոլոգիական աղետին, որի մեղավորը դիտարկվել էր ԶՊՄԿ-ն և նշել, որ քաղաքացիները պահանջում են մեկ բան՝ փոխհատուցել իրենց առողջությանը տված վնասը:
Արդյունքներ ՝ դատարանը հայցը բավարարել է մասնակի և վճռել պարտավորեցնել պատասխանողին հերքել հրապարակումը և «Դատաբլոգ» ՍՊ ընկերությունից հօգուտ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության ընկերության բռնագանձել 300.000 ՀՀ դրամ՝ որպես զրպարտության դիմաց փոխհատուցման գումար: :
Վճռի դեմ դատավարության որևէ մասնակցի կողմից բողոք չի ներկայացվել և այն մտել է օրինական ուժի մեջ:

5. **Հայցվոր՝ <<ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** (հանքարդյունաբերական ընկերություն)
Պատասխանող՝ Դատաբլոգ ՍՊԸ /լրագրողական կազմակերպություն/
Գործի համար ՝ ԵԴ2/0915/02/24
Դատավարության սկսման ամսաթիվ ՝ 13-02-2024
Պահանջներ ՝ հերքել զրպարտչական տվյալները և վճարել փոխհատուցում:
Մանրամասներ ՝ լրատվամիջոցների համար:
Արդյունքներ ՝ դատարանը հայցը բավարարել է մասնակի և վճռել պարտավորեցնել պատասխանողին հերքել հրապարակումը և «Դատաբլոգ» ՍՊ ընկերությունից հօգուտ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության ընկերության բռնագանձել 500.000 ՀՀ դրամ՝ որպես զրպարտության դիմաց փոխհատուցման գումար: :

6. **Հայցվոր՝ <<ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** (հանքարդյունաբերական ընկերություն)
Պատասխանող՝ Դատաբլոգ ՍՊԸ /լրագրողական կազմակերպություն/
Գործի համար ՝ ԵԴ2/1115/02/24
Հայցի ներկայացման ամսաթիվ ՝ 08-02-2024
Պահանջներ ՝ հերքել զրպարտչական տվյալները և վճարել 6 միլիոն դրամ փոխհատուցում:
Մանրամասներ ՝ լրատվամիջոցների համար:
Արդյունքներ ՝ դատարանը հայցը բավարարել է մասնակի և վճռել պարտավորեցնել պատասխանողին հերքել հրապարակումը և «Դատաբլոգ» ՍՊ ընկերությունից հօգուտ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության ընկերության բռնագանձել 300.000 ՀՀ դրամ՝ որպես զրպարտության դիմաց փոխհատուցման գումար: :
Վճռի դեմ դատավարության որևէ մասնակցի կողմից բողոք չի ներկայացվել և այն մտել է օրինական ուժի մեջ:

7. **Հայցվոր՝ <<ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** (հանքարդյունաբերական ընկերություն)
Պատասխանող՝ Դատաբլոգ ՍՊԸ /լրագրողական կազմակերպություն/
Գործի համար՝ ԵԴ2/1350/02/24
Հայցի ներկայացման ամսաթիվ ՝ 25-02-2024
Պահանջներ ՝ հերքել զրպարտչական տվյալները և վճարել 6 միլիոն դրամ փոխհատուցում:
Մանրամասներ ՝ լրատվամիջոցների համար:
Արդյունքներ ՝ դատարանը հայցը բավարարել է մասնակի և վճռել պարտավորեցնել պատասխանողին հերքել հրապարակումը և «Դատաբլոգ» ՍՊ ընկերությունից հօգուտ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության ընկերության բռնագանձել 300.000 ՀՀ դրամ՝ որպես զրպարտության դիմաց փոխհատուցման գումար: :
Վճռի դեմ բողոք չի ներկայացվել և այն մտել է օրինական ուժի մեջ:

8. **Հայցվոր՝ <<ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** (հանքարդյունաբերական ընկերություն**)**
Պատասխանող՝ Թերթ էՅ էՄ / լրագրողական կազմակերպություն/
Գործի համար ՝ ԵԴ2/1354/02/24
Հայցի ներկայացման ամսաթիվ ՝ 25-02-2024
Պահանջներ ՝ հերքել զրպարտչական տվյալները և վճարել 2 միլիոն դրամ փոխհատուցում:
Մանրամասներ ՝ լրատվամիջոցների համար:
Արդյունքներ՝ Առաջին ատյանի դատարանը մերժել է հայցը, սակայն վերաքննիչ դատարանը բեկանել է վճիռը և գործն ուղարկել առաջին ատյանի դատարան նոր քննության:
Գործի քննությունը ներկայումս շարունակվում է:

9. **Հայցվոր՝ <<ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (հանքարդյունաբերական ընկերություն)**
Պատասխանող՝ ՕԼԵԳ ԴՈՒԼԳԱՐՅԱՆ (ՀԿ ղեկավար)
Գործի համար ՝ ԵԴ2/1371/02/24
Հայցի ներկայացման ամսաթիվ ՝ 25-02-2024
Պահանջներ ՝ հերքել զրպարտչական տվյալները և վճարել 6 միլիոն դրամ փոխհատուցում:
Մանրամասներ ՝ 2024 թվականի հունվարի 24-ին ԶՊՄԿ-ին պատկանող «Արծվանիկ» պոչամբարի հնարավոր բնապահպանական ռիսկերի և վնասների վերաբերյալ մամուլին տված հարցազրույցում արտահայտված կարծիքի համար
Արդյունքներ ՝ Դատարանը վերադարձրել է գործը: Կրկին ներկայացման ժամկետը լրացել է և հայցը այն չի ներկայացվել :

10. **Հայցվոր՝ <<ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (**հանքարդյունաբերական ընկերություն)
Պատասխանող՝ Դատաբլոգ ՍՊԸ /լրագրողական կազմակերպություն/
Գործի համար ՝ ԵԴ2/1503/02/24
Հայցի ներկայացման ամսաթիվ ՝ 29-02-2024
Պահանջներ ՝ հերքել զրպարտչական տվյալները և վճարել 3 միլիոն դրամ փոխհատուցում:
Մանրամասներ ՝ լրատվամիջոցների համար:
Արդյունքներ ՝ դատարանը հայցը բավարարել է մասնակի և վճռել պարտավորեցնել պատասխանողին հերքել հրապարակումը և «Դատաբլոգ» ՍՊ ընկերությունից հօգուտ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության ընկերության բռնագանձել 300.000 ՀՀ դրամ՝ որպես զրպարտության դիմաց փոխհատուցման գումար:
Վճռի դեմ դատավարության որևէ մասնակցի կողմից բողոք չի ներկայացվել և այն մտել է օրինական ուժի մեջ:

<<Ռատկո>> ՍՊԸ շինարարական ընկերության կողմից ներկայացված հայցեր

1. **Հայցվոր՝ <<ՌԱՏԿՈ>> ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (**Շինարարաական ընկերություն)
Պատասխանող՝ Սեդա Գրիգորյան (Երևանի ֆիզԳորոդոկ թաղամասի բնակիչ)
Գործի համար ՝ ԵԴ/61615/02/22
Հայցի ներկայացման ամսաթիվ ՝ 24-11-2022
Պահանջներ ՝ հերքել զրպարտչական տեղեկությունները և վճարել 2 միլիոն դրամ փոխհատուցում:
Մանրամասներ ՝ գործը վերաբերում է քաղաքացիական նախաձեռնության ֆեյսբուքյան էջում արված գրառմանը, որը նվիրված էր բնակելի թաղամասը նոր շինարարությունից փրկելուն: Հնարավոր չէ տեսնել իրական հեղինակի կամ

նախաձեռնության անունից գրառումը հրապարակած անձի անունը: Սակայն շինարարական ընկերությունը հայց է ներկայացրել անձամբ Սեդա Գրիգորյանի դեմ՝ պնդելով, որ գրառման մեջ շինարարական աշխատանքների ուշացման վերաբերյալ պնդումները անհիմն են, ինչպես նաև պնդելով, որ շինարարական աշխատանքները կատարում է ենթակապալառու ընկերությունը, և նրանք պատասխանատու չեն իրենց գործունեության համար: Շինարարական RATKO ընկերությունը պահանջել է նաև Գրիգորյանի ակտիվների վրա 4 միլիոն դրամի չափով կալանք դնել որպես հայցի ապահովման միջանկյալ միջոց: Միջնորդությունը մերժվել է դատարանի կողմից:
Արդյունքներ ՝ Առաջին ատյանի դատարանը հայցը բավարարել է մասնակի և վճռել՝ Սեդա Գրիգորյանին պարտավորեցնել հրապարակայնորեն՝ «Ներողություն» Ռատկո» ՍՊԸ հասցեին վիրավորանք հնչեցնելու համար» վերնագրով, առնվազն երկու ամիս ժամկետով, Ֆեյսբուք սոցիալական կայքի իր անձնական էջում, իսկ դրա անհնարինության դեպքում առնվազն 5000 տպաքանակ և Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում սպառում ունեցող որևէ տպագիր թերթի միջոցով ներողություն խնդրել և միաամանակ վճռել Սեդա Սմբատի Գրիգորյանից հօգուտ «Ռատկո» ՍՊԸ-ի բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես զրպարտության համար նախատեսված փոխհատուցում:
Վճռի դեմ Գրիգորյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը մերժվել է:

2. **Հայցվոր՝ <<ՌԱՏԿՈ>> ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** (Շինարարաական ընկերություն)
Պատասխանող՝ Սեդա Գրիգորյան (Երևանի ՖիզԳորոդոկ թաղամասի բնակիչ)
Գործի համար ՝ ԵԴ/11310/02/22
Հայցի ներկայացման ամսաթիվ ՝ 15-03-2022
Պահանջներ ՝ ներողություն խնդրել վիրավորական և զրպարտչական տեղեկատվության համար և վճարել փոխհատուցում::
Մանրամասներ ՝ Շինարարական RATKO ընկերությունը պահանջել է նաև Գրիգորյանի հաշիվների վրա կալանք դնել՝ որպես հայցի ապահովման միջանկյալ միջոց: Միջնորդությունը մերժվել է դատարանի կողմից:
Արդյունքներ ՝ Առաջին ատյանի դատարանը մերժել է հայցը, որի դեմ ընկերությունը ներկայացրել է վերաքննիր բողոք, որը բավարարվել է և վճիռը բեկանվել է և ուղարկվել առաջին ատյանի դատարան նոր քննության;
Դատավարությունը շարունակվում է:

3. **Հայցվոր՝ <<ՌԱՏԿՈ>> ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** (Շինարարաական ընկերություն)
Պատասխանող՝ ՍԵԴԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գործի համար ՝ ԵԴ/44225/02/21
Հայցի ներկայացման ամսաթիվ ՝ 30-09-2021
Պահանջներ ՝ հերքել զրպարտչական տեղեկությունները և վճարել 2 միլիոն դրամ փոխհատուցում:
Մանրամասներ ՝ Բողոքի ցույցերի ժամանակ Սեդա Գրիգորյանը հարցազրույց է տվել news.am լրատվականին (news.am լրատվականը դատավարությանը մասնակցել է որպես երրորդ կողմ), որտեղ պնդել է, որ շինարարությունից առաջ և ընթացքում, շինարարությունն իրականացնելու թույլտվություն ստանալու գործընթացում

«ՌԱՏԿՈ» ՍՊԸ-ի կողմից իրականացվել են անօրինական գործողություններ, ինչպես նաև հողի սեփականաշնորհման ողջ գործընթացն ունի անօրինական նախապատմություն:
Արդյունքներ ՝ Դատարանը որոշել է հայցը բավարարել մասնակի Պարտավորեցնել Պատասխանող Սեդա Սմբատի Գրիգորյանին հրապարակայնորեն՝ «Հերքում» խորագրի ներքո, առնվազն մեկ ամիս ժամկետով, հրապարակել տեսահոլովակ հերքելով զրպարտություն համարվող փաստացի տվյալները և Սեդա Սմբատի Գրիգորյանից հօգուտ Հայցվոր «Ռատկո» ՍՊ ընկերության բռնագանձել 100.000 ՀՀ դրամ, որպես վերոնշյալ զրպարտության համար նախատեսված փոխհատուցում:

4. **Սեդա Գրիգորյան (չորրորդ գործ)**
Քրեական հետաքննություն .
Պահանջներ . Շինարար RATKO ընկերությունը ոստիկանություն է դիմել իր գույքին հասցված վնասի մասին և պահանջել քրեական հետաքննություն: Վնասվածքը շինհրապարակի ցանկապատերի վրա գրված (ազատագրենք Գորոդոկը) գրաֆիտին էր, որը, ըստ ընկերության, ներկել է Սեդա Գրիգորյանը:
Մանրամասներ . Գրիգորյանը քրեական հետաքննության մասին իմացել է, երբ երկու տղամարդ քննիչներ թակել են նրա դուռը և ցույց տվել խուզարկության օրդեր (ենթադրաբար՝ կարմիր ներկի սփրեյով խուզարկություն) և խուզարկել ամբողջ բնակարանը՝ այն վերածելով քաոսի: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և քաղաքացիները ստորագրել են միջնորդություն՝ պահանջելով իրավապահ մարմիններից դադարեցնել բնակիչ և վավերագրող Սեդա Գրիգորյանի նկատմամբ հետապնդումը և փոխարենը հետաքննել կառուցապատող RATKO-ի կողմից իրականացված անօրինական շինարարությունը: Մանրամասները տե՛ս հայտարարության մեջ՝ https://hetq.am/hy/article/137842 : Դեպքի այլ մանրամասներ և շինարարական ընկերության գործողությունների ընդհանուր համատեքստը՝ «Ազատություն» ռադիոկայանի անգլերեն լեզվով թողարկման մեջ՝ https://www.rferl.org/a/armenia-yerevan-development-police-activists/31554918.html
Արդյունքներ ՝ ոստիկանությունը դադարեցրեց հետաքննությունը: